

Շահբազյան Լ. - «Գնորդի խնդիր չունեմ»

Կամ՝ Արամ Իսաբեկյանի «Իմ այգին» շարքը՝ Սարո Սարուխանյանի հիշատակին -  
թերթ, «Առավոտ», Ե., 11.10. 2011

Դեռևս մի քանի օր առաջ արվեստաբան, ՀՀ նկարիչների միության անդամ Սարո Սարուխանյանը զբաղված էր ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, գեղանկարիչ Արամ Իսաբեկյանի նոր անհատական ցուցահանդեսի աշխատանքներով: Երեկ «Ալբերտ եւ Թով Բոյաջյան» ցուցասրահում բացվեց գեղանկարչի ցուցահանդեսը, բայց առանց Սարո Սարուխանյանի. բացումից երեք օր առաջ՝ 67 տարեկան հասակում կյանքից հեռացավ անվանի արվեստաբանը:

Ինչպես նշեց Ա. Իսաբեկյանը. «Գեղանկարներիս շարքը կոչվում է «Իմ այգին»: Սարո Սարուխանյանն է ինձ ուղղորդել սեփական ձեռքերով ստեղծած այգին կտավներին հանձնեմ: Ցուցահանդեսս նվիրվում է նրա հիշատակին»: Ցուցահանդեսին ներկայացված էր 15 աշխատանք: Հեղինակի խոսքով. «Ծաղիկներով լի այգին միշտ հորս՝ Էդուարդ Իսաբեկյանի «հիվանդությունն» է եղել: Երբ Աշտարակում տուն ունեցանք, ստիպված այգի ստեղծեցի ու որոշ ժամանակ անց ինքս էլ սիրահարվեցի այդ այգուն: Այգու թեմայով 25 աշխատանքից բաղկացած շարք ստացվեց, որոնցից 15-ն եմ այսօր ներկայացրել: Սրանք այն ընտրյալներն են, որոնք պետք է ներկայացվեն պետական մրցանակի: Շատերի կարծիքով այս կտավներում ոճս այլ է, բայց ըստ իս ոչ մի փոփոխություն չկա, քանի որ սովորաբար նկարում եմ, եւ աշխատանքներս տեղում վաճառվում են. մարդիկ չեն հասցնում տեսնել դրանք: Գուցե գունագեղ են, պայծառությամբ լի, դա նրանից է, որ իմ այգին է, իմ ամեն մի ծառն ու թուփը»:

Հետաքրքրվեցինք՝ ովքե՞ր են Ա. Իսաբեկյանի գնորդները: Ըստ նրա, թե՛ Հայաստանում եւ թե՛ աշխարհում առհասարակ չկա մի նկարիչ, որ գնորդի խնդիր չունենա. «Հայաստանում այդ խնդիրը առավել եւս կա, քանի որ այստեղ չկա պրոֆեսիոնալ շուկա: Այստեղ ամենամեծ խնդիրն այն է, որ նկարչի վրա, բացի արվեստի նմուշ ստեղծելուց, դրված է նաեւ իրենով զբաղվելու հարցը, այսինքն՝ դու, բացի նկարելուց, նաեւ պետք է ճարպիկ լինես, որ կարողանաս քո ստեղծագործությունը սպառես: Իսկ ճարպկություն ո՛չ բոլորն ունեն: Ես էլ չունեմ, չնայած ստացվում է այնպես, որ ինձնից նկարներ շատ են գնում... Ինչպես գնորդների պակասից չեմ դժգոհում, այնպես էլ իմ գնորդներից: Նրանք հիմնականում արվեստից հասկացող մարդիկ են: Շատ քիչ մարդկանց կարող եմ հիշել, որ գնում են պարզապես գնելու համար: Նոր հարստացած մարդկանց մեծ մասը արվեստից հեռու է, նրանք չեն կարող լինել իմ գնորդը: Շատ բաների վրա հեշտությամբ կարող են ահռելի գումարներ ներդնել, բայց արվեստի գործ գնելիս սկսում են կարկամել: Հույս ունեմ, որ ժամանակը այս հանգամանքն էլ կհարթի Հայաստանում, ինչպես դա եղավ Ռուսաստանում՝ ռուս միլիոնատերերի պարագայում: Նրանք նկարչից որեւէ կտավ գնելիս ոչ թե գին են զգում,

այլ իրենք են բարձրացնում՝ հասկանալով, որ իրենց ազգին են օգուտ տալիս: Մեր տեղը դա ոչ անգլիացին կանի, ոչ էլ ճապոնացին: Ամեն ոք պետք է կարողանա իր ազգի՝ շնորհալի մարդկանց գնահատել, այլ չփորձի նսեմացնել, էժանացնել այնքան, ասես՝ կարտոֆիլ կամ լոլիկ են գնում»:

Լուսինե Համբազյան

<https://www.aravot.am/2011/10/11/336787/>